

# ԲԱՆԱԿԵՃ ԵՎ ԶՆՆԱՐԿՈՒՄ

ԳՈՐԿԱՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

## ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ՖԻՆՆԱՌՈՒԳՐԱԿԱՆ ԼԵՁՈՒՆԵՐԸ

Հայերենն, իբրև հնդեվրոպական լեզու, ունի մաս բազմաթիվ չստուգաբանված արմատներ, որոնց համարժեքները հնարավոր չի եղել գտնել այլ հնդեվրոպական լեզուներում: Բառապաշարի և քերականական կառուցվածքի ակնհայտ տարբերությունները հայերենի ձագման վերաբերյալ բազմապիսի տեսությունների հիմք են հանդիսացել: Նախանցյալ դարում տիրապետող էր այն տեսակետը, թե հայերենը նախապես ունեցել է մյուս հնդեվրոպական լեզուներին բնորոշ բոլոր հատկանիշները քերականական սեռ, բարձրության շեշտ, բաղաձայնների կուտակում վանկի սկզբում, որոնք վերագրվում էին մաս հնդեվրոպական նախալեզվին, սակայն հետագայում ինչ-ինչ պատճառներով կորցրել է դրանք: Խոսվել է հնդեվրոպական տարրի եկվորության, ամատուլիական ենթաշերտի մասին: Որոշ ուսումնասիրողներ գտնում էին, որ հայերենը երկբնույթ կամ խաչավորված լեզու է (և Մառ):

Սակայն կուտակված լեզվագիտական նյութը արդեն հնարավորություն է տալիս վերոհիշյալ հարցին նայելու փոքր-ինչ այլ կերպ: Թերևս հարկ կլինի ընդունել, որ նախ՝ աշխարհի լեզուների դասակարգումն ըստ լեզվաընտանիքների որոշ չափով պայմանական է: Ըստ որում մոր գաղափար չէ և այն, որ պայմանական պետք է համարել մաս հնդեվրոպական նախալեզու, սեմական նախալեզու, ուրալյան նախալեզու և մյուս այլ հասկացությունները՝ երկրորդ՝ կգտնվեն լեզուներ, որոնց դասակարգումը որոշակի դժվարություններ կհարուցի: Օրինակ՝ կելտական լեզուները մտնում են հ.-ե. լեզվաընտանիքի մեջ, սակայն մյուսն քերականական կառուցվածքում առկա են հ.-ե. լեզուներին ոչ բնորոշ տարրեր: Այս տեսակետից ակնբախ է, որ հայերենն ուղղակի չի «տեղավորվում» հ.-ե. լեզվաընտանիքի շրջանակներում: Օրինակ՝ ինչո՞ւ անպատճառ ենթադրել, թե հայերենը նախապես ունեցել է քերականական սեռ, եթե այդ հասկացությունն առհասարակ չկա ուրալյան և ալթայյան լեզուներում: Այդպես են մաս կովկասյան լեզուները: Առավել ևս հիմքեր չկան ենթադրելու, թե հնագույն հայերենն ունեցել է բարձրության (երաժշտական) շեշտ: Շատ լեզվաբաններ այլևս չեն ընդունում մաս հ.-ե. նախալեզվի բարձրության շեշտ ունենալու մասին դրույթը:

Ինչպես նշում է Գ. Աճառյանը, «տոն ունեցող լեզուների մեջ առաջին տեղն են բռնում անջատական կամ միավանկային լեզուները»<sup>2</sup> Հասկանալի է, որ այսպիսի լեզուներում (չինարեն, լաոսերեն, թաի, մի շարք աֆրիկյան լեզու-

<sup>1</sup> П. Хайду, Уральские языки и народы, М., 1985, с. 170.

<sup>2</sup> Գ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. VI, Երևան, 1971, էջ 294:

ներ) բարձրության շեշտը բառակազմական միջոցի դեր է կատարում, իսկ հին հունարենի և սանսկրիտի նման բառակազմական հնարավորություններ ունեցող լեզուները դրա կարիքը չունեն։ Հետևաբար, տրամաբանական է ենթադրել, որ բարձրության շեշտը որոշակի ենթաշերտային ազդեցության հետևանք է միայն։

Յու. Գաբրիելյանը գտնում է, որ «չի հաստատվում Սեյեի այն պնդումը, թե ընդհանուր հնդեվրոպականին հատուկ է եղել բարձրության շեշտը, որը հայերենում իր բնույթը փոխել է և, այդպիսով, ծայնավորների հնչափապալման պատճառ է դարձել»<sup>3</sup>։

Հայերենը ֆիննաուգրական լեզուների հետ համեմատելով՝ տեսնում ենք, որ հունգարերենն ու ֆիններենը դասական հայերենի պես չունեն երկու և ավելի բաղաձայններով սկսվող արմատներ, և վանկը կարող է սկսվել միայն մեկ բաղաձայնով։ Հակառակ պարագայում տվյալ բառը փոխառություն է որևէ հնդեվրոպական լեզվից։

Ինչպես գիտենք, ժամանակակից հայերենը գերազանցապես կցական լեզու է, որով նույնպես տարբերվում է այլ հ.-ե. լեզուներից։ Արևելահայ աշխարհաբարն, անշուշտ, գրաբարի ուղղակի շարունակությունը չէ։ Հ. Աճառյանը, աշխարհաբարի և թուրքերենի շարադասությունը համեմատելով և հայտնաբերելով գրեթե լիակատար նմանություն, սկզբում ենթադրել է, թե դա հետևանք է թուրքերենի ազդեցության։ Սակայն հետազայում, գտնելով 7-րդ դարի գրավոր հուշարձան, որի լեզուն շարադասությամբ գրեթե չէր տարբերվում աշխարհաբարից, հրաժարվել է այդ տեսակետից<sup>4</sup>։ Հարցն առ այսօր մնում է բաց։ Ինչո՞վ բացատրել հայերենի կցական լեզուներին բնորոշ քերականական կառուցվածքը, եթե այն ցեղակցական կամ որևէ այլ կապ չունի աշխարհի մյուս կցական լեզուների հետ։ Մի՞թե ամբողջությամբ ինքնուրույն զարգացման արդյունք է։

Փորձելով համեմատել հայերենը մի շարք ֆիննաուգրական լեզուների հետ բախվեցինք այն իրողությանը, որ անհրաժեշտ է հրաժարվել ցանկացած լեզու միայն դասական գրաբարի հետ համեմատելու ավանդույթից, քանի որ համեմատություններն արևելահայերենի և նրա բարբառների հետ ուղղակի «աղերսվում են»։ Բառապաշարից և քերականական կառուցվածքից զատ այն էլ զարնում այն հանգամանքը, որ որոշ ֆիննաուգրական լեզուներ, ինչպես հայերենի որոշ բարբառներ (Ղարաբաղ, Վան, Մարաղա, Ուրմիա, Խոյ) գրեթե ծայնեղազուրկ են։ Մյուսն են, օրինակ, ֆիններենն ու էստոներենը, ուր փոխառյալ բառերում անգամ ծայնեղ բաղաձայնները հաճախ խլանում են։ Ուգրաֆիննական լեզուներին բնորոշ է քմային ծայնավորների և քմայնացած բաղաձայնների առատությունը, որ բնորոշ է նաև հայերենի շատ բարբառների (Ղարաբաղ, Վան, Մարաղա, Խարբերդ)<sup>5</sup>։ Նրանցից շատերը գուրկ են Ֆ քաղաձայնից (ֆիններեն, էստոներեն, մարիերեն, կոմի, ուլմուրտերեն)։ Մի շարք ուգրաֆիննական լեզուներում խիստ տարածված է ա հնչյունը, որն արտասանությամբ համապատասխանում է ռուսերենի միսնույն գրությամբ արտահայտ-

<sup>3</sup> Յու. Գաբրիելյան, Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն, Երևան, 2001, էջ 185։

<sup>4</sup> Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951, էջ 290-293։

<sup>5</sup> Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, հ. VI, 1971, էջ 195։

վող հնչյունին: Այն խորք չէ նաև հայերենի որոշ բարբառներին, և ինչպես հայտնի է, բարբառագիտության մեջ նշվում է ը՝ գրույթով:

Ֆիննաուգրական լեզուներին բնորոշ են հոլովների առատությունը, ստացական վերջածանցները (որոնք համապատասխանում են հայերենի ստացական հոդին), կապերի գործածությունը նախդիրների փոխարեն: Վերջիններս խիստ սակավ կիրառություն ունեն: Ծագումով և բնույթով կցական տիպի լեզուներ են, սակայն որոշ լեզուներում, ինչպես, օրինակ, սաամբենում առկա է հ.-ե. լեզուներին բնորոշ հնչյունների հերթագայությունը: Ֆիննաուգրական լեզուներին բնորոշ է ձայնավորների ներդաշնակությունը: Այս երևույթին հանդիպում ենք նաև հայերենի մի շարք բարբառներում (Վան, Ագուլիս, Մարադա, Արցախ):

Գիտնականների ճնշող մեծամասնությունը ֆիննաուգրական ժողովուրդների նախահայրենիքը համարում է Արևելյան Եվրոպան՝ Վոլգայի և Կամայի միջին հոսանքի շրջանը, Վոլգայի գետագալարի և Ուրալյան լեռնաշղթայի միջև, ուր նրանց նախնիները ապրել են հազարամյակներով<sup>9</sup>:

Արդյո՞ք ֆիննաուգրական ժողովուրդները միշտ են ապրել այդտեղ: Հայտնի է, որ պատմական Հայաստանի շատ գավառներ կրում են Հայկական լեռնաշխարհում բնակված և ի վերջո ծուլված ցեղերի անունները: Արդյո՞ք պատահական է ուգրաֆիննական որոշ ժողովուրդների և Հայկական լեռնաշխարհում վաղնջական ժամանակներից բնակվող և պատմական ինչ-որ պահի անհետացած ժողովուրդների անվանումների նմանությունը: Վասպուրականում Մարդաստան կամ Մարդուցայք կոչվող գավառում, հնուց ի վեր ապրել է մարդերի ցեղը: Այսօրվա մորդվիներն իրենց կոչում են էրզյա և մոկչա (ըստ այդմ լեզուն բաժանվում է 2 բարբառի): Արդյո՞ք Աղծնիք (Արզան) և Մոկս գավառները չեն կրում հենց այս ցեղերի անունները: Պ. Հայդուն, վերլուծելով ուգրաֆիննական գրեթե բոլոր ժողովուրդների անվանումները, վերոհիշյալ երկուսը համարում է անվերծանելի<sup>10</sup>: Ըստ ավանդական ստուգաբանության մորդվա կամ մորդվին բառի արմատը նշանակում է «մարդ» (հմտ. Ուտիք, և մուրթ «մարդ» Սվեդիայի բրբռ): Ըստ Ս. Ֆասմերի ուղմուրտները հնում կոչվել են արիներ<sup>11</sup>: Իսկ մորդվա (մորդվին), մեր կարծիքով, բառի հոգնակին է: Ֆինների ինքնանվանումն է սուոմի (հմտ. Սիւնիք): Ուտիքում 9-րդ դարից հիշատակվում է Սևորդիների ցեղը, որ համարվում է հունգարական ժողովուրդ<sup>12</sup>. Բացառված չէ նաև, որ այսօրվա մարիները, որոնց լեզվում հայկական և իրանական բառային շերտը խիստ ակնհայտ է, պատմական Մարաստանի էթնիկական տարրերից մեկի հետնորդները լինեն: խիստ ուշագրավ է, որ Կազանցնը մարիների անվանումներից մեկը չերենիս, ստուգաբանում է իբրև «արև-մարդ» (солнечный человек)<sup>13</sup>: (Հիշենք արևի պաշտամունքը հին Հայաստանում և հարևան երկրներում):

<sup>9</sup> Лыткин, Историческая грамматика коми языка, Сыктывкар, 1957, с.13.

<sup>10</sup> П. Хайду. указ. соч., с.101.

<sup>11</sup> М. Фасмер. Этимологический словарь русского языка, т. 1, М., 1986.

<sup>12</sup> Գ. Անայան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951, էջ 203:

<sup>13</sup> Д. Казанцев, Формирование диалектов марийского языка, Йошкар-Ола, 1985, с. 10.

Վերոհիշյալից չի բխում, թե ֆիննաուգրական լեզուները այսօրվա վիճակով գոյություն են ունեցել Գայկական լեռնաշխարհում: Ենթադրում ենք, որ այնտեղ բնակվող ցեղերի թվում կային այնպիսիները, որոնք խոսում էին հայերին անհասկանալի ինչ-որ բարբառներով, և որոնք հայ պատմիչներից ոմանք անվանել են «մթին»: Զենք բացառում, որ այդ բարբառներն առաջացել են օտար ենթաշերտի ազդեցությամբ, որի կրողները ծուլվել են հայկական միջավայրում:

Ֆիննաուգրերի զբաղեցրած ներկայիս տարածքում հնագիտական հետազոտությունները փաստում են մ. թ. ա. 3-րդ հազարամյակում ընթացած զանգվածային գաղթեր և բարդ էթնոգենետիկական պրոցեսներ, որոնց մասին կռահումներ անելը բավականին անշնորհակալ գործ է: Բայց այն, որ ֆիննաուգրերն ինչ-որ ժամանակ լուրջ լեզվական առնչություններ են ունեցել Գայկական լեռնաշխարհի բնակիչների հետ, ենթադրելի է: Դժվարագույն խնդիր է պարզել՝ արդյո՞ք այդ շփումը տեղի է ունեցել Գայկական լեռնաշխարհում, թե՞ նրա սահմաններից դուրս<sup>11</sup>:

Ըստ ֆիննաուգրագետների հիշյալ լեզուներում առկա է բառապաշարի մի որոշակի շերտ, որ գոյություն է ունեցել դեռևս ուրալյան նախալեզվում, և մի այլ շերտ, որ համարվում է բուն ֆիննաուգրական: Բնիկ համարվող բառերի մի մասն իրանական ծագում ունի, բայց կա բառապաշարի մի շերտ, որի ծագումը բոլորովին անհայտ է: Ըստ Կազանցիի՝ «մարիերենի բառապաշարի իրանական շերտում կարելի է առանձնացնել բառեր, որոնք բնիկ իրանական չեն: Այդ փոխառությունների աղբյուրն առայժմ հայտնի չէ»<sup>12</sup>: Ընդ որում Կազանցը գտնում է, որ ուրալյան լեզվական ընդհանրության տրոհումը կատարվել է մ.թ.ա. 4-րդ հազարամյակում<sup>13</sup>: Այդ բառերի թվին կարելի է դասել մարիերեն *вєр/вəр* «տեղ» (հայ. վայր), *лум/лым* «ծլուն» (հայ. եղեման), *күз/кучи* «կեչի» (հայ. կեչի), *йушѣ/ушан* «ցուրտ, սառը» (հայ. ոյծ), *илаш/ылаш* «ապրել» (հայ. եղ-), *няемс/неемс* «տեսնել» (հայ. նայեն), *кучемс* «ուղարկել» (հայ. քշեն), *эрь/эрьва* «յուրաքանչյուր» (հայ. իւր), *ауамс* «փռել» (հայ. ածեն), *аш* «ոչ» (հայ. ոչ) և այլն, որոնք բուն ֆիննաուգրական են համարվում<sup>14</sup>:

Դարձերենի համեմատությունը ֆիննաուգրական լեզուների հետ ցույց է տալիս բավականին ոչ միակերպ պատկեր: Ընդհանրությունների մի մասը պետք է վերագրել ամենահնագույն շրջանին: Որոշ բառեր ընդհանուր են միայն հայերենի և ֆիննաուգրական լեզուների համար, այսինքն համարժեք արմատ-

<sup>11</sup> Ծանոթ. Այս տեսակետից լուրջ հետաքրքրություն է ներկայացնում մ.թ.ա. 4-րդ հազարամյակում հարավից հայտնված անհայտ էթնոսի ներթափանցումը ուգրաֆինների բնակության ներկայիս տարածք: Ի հետևանս այդ ներթափանցման ուրալյան ժողովուրդները, որոնց բարբառների միասնությունը մի ժամանակ կազմել է ուրալյան նախալեզուն, և որն այդ ժամանակ արդեն բաժանված է եղել երկու ժյուղի՝ ֆիննաուգրական և սամոդիական, վերջնականապես տրոհվեց. և միասնությունից անջատվեցին սամոդիական ցեղերը: Չիտնականների կարծիքով եկվորներն իրենց հետ բերեցին միանգամայն նոր մշակույթ և նոր չեզո: Բացառված չէ, որ բնիկներն ընդունեցին եկվորների լեզուն՝ պահպանելով ուրալյան ենթաշերտը, որը և խթան հանդիսացավ ուրալյան նախալեզվի վերջնական տրոհման համար:

<sup>12</sup> Д. Казанцев, указ. соч., с. 57.

<sup>13</sup> Д. Казанцев, указ. соч., с. 26.

<sup>14</sup> Основы финноугорского языкознания, М., 1976.

ներ հ. – ե. լեզուներում գտնված չեն: Իսկ բառային որոշ զուգահեռների դեպքում դժվար է հավատալ, թե դրանք հազարամյակների հնություն ունեն: Եվ եթե դա իրոք այդպես է, ապա այն կարող է ինչ–որ չափով փոխել մեր պատկերացումները հայերենի պատմական զարգացման ընթացքի մասին:

Հայերենի և ֆիննաուգրական լեզուների բառապաշարի և քերականական կառուցվածքի, նույնիսկ որոշ քերականական կազմիչների վերլուծությունն առանձին ուսումնասիրության նյութ կարող է լինել: Այստեղ համեմատությունն սկսելով հունգարերենից և կանգ առնելով միայն բառապաշարի քննության վրա՝ ավելորդ չենք համարում ուշադրություն դարձնել թերևս միայն հոգնակի թվի կազմությանը և անորոշ դերբայի կառուցվածքին:

Հունգարերենի հոգնակի թիվը կազմվում է –k վերջավորությամբ, եթե բառը վերջանում է ձայնավորով, և –ok, –ek, –ök վերջավորություններով, եթե բառը բաղաձայնով է ավարտվում: Ձայնավորների հերթագայությունը բացատրվում է ֆիննաուգրական լեզուներին քննորոշ ներդաշնակության օրենքով (сингармонизм):

#### Օրինակ

ez «այս» – ezek «սրանք»

az «այդ, այն» – azok «դրանք, նրանք»

kert «այգի» – kertek «այգիներ»

fal «պատ» – falak «պատեր»

könyv «գիրք» – könyvek «գրքեր»

haz «տուն» – hazak «տներ»

ajto «դուռ» – ajtók «դռներ»

anya «մայր» – anyak «մայրեր»

Հունգարերենի և մի շարք հնդեվրոպական լեզուների անորոշ դերբայի կազմության նմանությունը վաղուց է նկատվել և կասկած չի հարուցում: Վերջավորությունն է –ni, –eni, –ani: Հմմտ. գերմ. *bringen, singen, binden, trinken*, հանգլ. *bringen* (նանգլ. *bring*), *bindan* (*bind*), *drincan* (*drink*), *findan* (*find*), *feohlan* (*fight*), *ceosan* (*choose*), *beran* (*bear*). հինդի *bolnā* «խոսել», *jalnā* «վառվել», *dekhnā* «նայել», *manā* «ծնծել», *bhagnā* «փախչել» և այլն: Մակայն հունգարերենում մի շարք բայեր ունեն մի առանձնահատկություն. անորոշ դերբայի վերջավորությունից առաջ դրանք ստանում են –al, –ol, –ul, –öl, –el ձևությամբ շարքը, որ հունգարերենի քերականության մեջ որևէ բացատրություն չունի: Օրինակ օրօնի «աղալ», *csinalni* «շինել, սարքել», *sarkalni* «կոշիկի կրունկ նորոգել», *jaralni* «մոտենալ», *karcolni* «քերծել», *tüzelni* «վառել», *utalni* «ատել», *kartolni* «քորել», *kerulni* «խուսափել, շրջանցել», *törolni* «տրորվել», *tanulni* «սովորել»: Անորոշ դերբայի վերջավորությունը հանելով, ստանում ենք՝ հունգ. օրօ – հայ. *աղալ*, հունգ. *sarka* – հայ. *սարքել*, հունգ. *csina* – հայ. *շինել*, հունգ. *jaral* – հայ. *յարել*, հունգ. *karc* – հայ. *քերծել*, հունգ. *utal* – հայ. *ատել*: Կարծում ենք, որ հունգարերեն *tuzelni*, *kerulni*, *tanulni* բառերին զուգադրելի են հայերեն *թեծ*, *կեռ*, *ժան* արմատները: Օրօնի, *jaralni*, *sarkalni* և այլ այս տիպի բառերում հայերենի անորոշ դերբայի վերջավորությունը չի գիտակցվել որպես այդպիսին, այդ պատճառով էլ հունգարացիները այդ բառերին ավելացրել են –ni վերջավորությունը: Այս երևույթը լիովին հասկանալի կդառնա, եթե դիտարկենք ռուսերենից կատարված փոխառությունները մի քանի ֆիննաուգրական լեզուներում: Օրինակ՝ կոմի *звонитны* – ռուս. *звонить*, կոմի *проститны* – ռուս. *простить*, կոմի *жалитны* – ռուս. *жалеть*, կոմի *мерайтны* – ռուս. *мерить*, մարիերեն *обижатлаш*, *извинитлаш*, *жаритлаш* – ռուս. *обижать*, *извинить*, *жарить*:

Ինչպես տեսնում ենք, ռուսերեն անորոշ դերբայն իր վերջավորությամբ ընդունվել է որպես բառի արմատ, որին ավելացել է տվյալ լեզվի անորոշ դերբայի վերջավորությունը: Սակայն կան բազմաթիվ փոխառություններ, որոնցում ռուսերենի անորոշ դերբայի վերջավորությունը չկա: Օրինակ՝ *обидямс, зубрямс, помнямс, решамс* — ռուս. *обидеть, зубрить, помнить, решить*; մարիերեն *хвалаяш, гуляяш, жараш*, — ռուս. *хвалить, гулять, жарить*: Նույն կերպ հունգարերենում կան բայեր, որոնք չունեն —al, —ol, —ul, —ol, —el ձևությամբ չափ, այսինքն՝ հայերենի անորոշ դերբայի վերջավորությունը, արմատին ավելացել է միայն —ո վերջավորությունը:

|                    |        |                       |              |
|--------------------|--------|-----------------------|--------------|
| Allni «կանգնել»    | ել—    | Nezni «նայել»         | նայել        |
| Aszni «չորանալ»    | ազագել | Olvadni «հալվել»      | հալ—ված      |
| Aradni «հորդել»    | առատ   | Őlni «սպանել»         | եղեծն        |
| Bimí «տանել, կրել» | բեր    | Sietni «շտապել»       | շտապ         |
| Elni «ապրել»       | եղ—    | Susogni «շշջալ»       | շշուկ        |
| Esmi «ընկնել»      | էջ—    | Szabni «ծնել»         | ծել          |
| Imi «գրել»         | գիր    | Szarmatni «սերել»     | սերմն        |
| Fujni «փչել»       | փուջ   | Szelni «կտրել, հատել» | ցել—ուկ      |
| Fumi «փորել»       | փոր    | Szeretni «սիրել»      | սեր          |
| Jamí «երթալ»       | երթ    | Szomi «ցանել»         | ցիր          |
| Keresni «հարցնել»  | հարց   | Szumi «ծակել, խոցել»  | սուր         |
| Keretni «խնդրել»   | « »    | Szúrní «քամել»        | ծիր          |
| Lenni «լինել»      | լինել  | Termi «շրջվել»        | դառնալ       |
| Menni «գնալ»       | ման    | Torni «տորել»         | տորո և այլն: |

Համեմատությունը ցույց է տալիս, որ հայերենի և ֆիննաուգրական արմատների նմանությունը պատահական չէ: Ժամանակին Գ. Ջահուկյանը բազմաթիվ հայ—ֆիննական զուգահեռներ է գտել<sup>12</sup>: Հետաքրքրական է, որ ուգրաֆիննական լեզուներում հայտնաբերվում են հայերենի չստուգաբանված արմատների զուգահեռներ:

### Օրինակ՝

#### Ֆիններեն

#### հայ.

|              |            |            |          |                |          |
|--------------|------------|------------|----------|----------------|----------|
| Hipaa        | «հավել»    | հուպ       | Mennää   | «գնալ»         | ման      |
| Hius         | «գլխի մազ» | հիւս       | Pitää    | «պետք է»       | պետ—պիտ— |
| Hiutaa       | «իյուծվել» | հիւծ       | Puute    | «թերություն»   | փուտ     |
| Kaato        | «կտուր»    | կտուր      | Sana     | «բառ»          | ծայն     |
| Keskeli      | «միջև»     | կէս        | Sarakc   | «սյունակ»      | շարք     |
| Kesä         | «ամառ»     | կէզ        | Sarya    | «շարք»         | շար      |
| Kiduius      | «կտտանք»   | կտուտ      | Sarka    | «շերտ, հատված» | շարք     |
| Kiduttaa     | «տանջել»   | կտուտ      | Sulettaa | «ծուլել»       | ծոլլ     |
| Kirkas       | «պայծառ»   | կրակ       | Säiliä   | «ծալել»        | ծալ      |
| Kitsas       | «ժլատ»     | կծծի/զծուծ | Syryä    | «ծայր»         | ծայր     |
| Leipa/leivan | «հաց»      | լավաշ      | vaski    | «պղինձ»        | ոսկի     |

<sup>12</sup> Գ. Ջ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 293—296:

մարիերեն

հայ.

|           |             |        |          |             |         |
|-----------|-------------|--------|----------|-------------|---------|
| Вер       | «տեղ, վայր» | վայր   | Пудыртай | «կոտրել»    | պատտել  |
| Ем        | «համ»       | համ    | Пыдыртай | ջարդել»     |         |
| Коштыра   | «կոպիտ»     | կոշտ   | Пыдыргы  | «բեկոր»     | պատառ-ք |
| Креаш     | «կողոպտել»  | զրավել | чырык    | «քառորդ»    | չորեք-  |
| Поч       | «պոչ»       | պոչ    | шокаш    | «շոգ, տաք»  | շոգ     |
| Пудештайш | «պայթել»    | պայթ-  | шурно    | «հացահատիկ» | ցորեն   |

կոմի

հայ.

|         |            |       |         |            |           |
|---------|------------|-------|---------|------------|-----------|
| Киль    | «կլեպ»     | կլեպ  | Бызьыны | «վազել»    | շոգ       |
| Дэбыны  | «բարցնել»  | ծպտել | Жог     | «շոգ»      | կեզ       |
| Кыдз    | «կեչի»     | կեչի  | Кезет   | «տենդ»     | կես       |
| Кызыны  | «հազալ»    | հազ   | Кесег   | «պատառ»    | կեչի      |
| Шог     | «վիշտ»     | սուզ  | Кызъ пу | «կեչի»     | փոս       |
| Шогаены | «սզալ»     | սուզ  | Пась    | «անցք»     | բոց       |
| Пось    | տաք, շոգ   | բոց   | Позъ    | շոգ, տապ   | այր-(արև) |
| Кыш     | կաշի, կեղև | կաշի  | Араны   | այրվել վազ |           |

Ուղմուրտերենում հանդիպում են հայերենին զարմանալիորեն մեծանալի «տարածել», արտերտեր «տեսակավորել», արտերտեր «ծմրթել» բառերը, որոնցում ուղղակի անհնար է չնկատել հայերեն շարտել, շերտ, ծմրթել արմատները: Եվիշտ նույն կերպ երգաներենում գտնում ենք каподемс «բռնել» (հայ. կապոտեմ), поремс «կրծել» (հայ. փորեմ), чемерямс «ծմրել» (հայ. ծմրեմ), бахадемс «հարվածել», бахаемс «կրակել» (հայ. բախեմ), чемердемс «ծմրել» (հայ. ծմրեմ), մոկչաներենում՝ капа «դեզ» (հայ. կապ), кялемс «զնալ» (հայ. քալեմ), киза «ամառ» (հայ. կեզ/կիզ-) բառերը: Ֆիննա-ուգրական լեզուներում կան այնպիսի զուգաբանություններ, որոնք ընդհանուր են գրեթե ողջ լեզվաընտանիքի համար, հետևաբար այդ բառերը գոյություն են ունեցել հազարամյակներ առաջ, նախքան ֆիննաուգրական ընդհանրության տրոհումը:

Օրինակ՝

1. բարի — կոմի бур «բարի», бұра «լավ», մարի поро, էրգյա паро, ֆին. paras «բարի»:
2. առու — հունգ. ar «հոսք, հոսանք», aradni «հորդել» ֆին. оуту, ուղմ. öp «առու» էրգյա эрьке «լիճ» մոկչա «լիճ»:
3. գիր — ֆին. kirja «գիրք», kirjattaa «գրել», կոմի кырым «ստորագրություն»:
4. դառնալ — հունգ. ietmi «շրջել, շրջվել, թեքվել», կոմի тюрөдны «զլորել», тюръяены/тюрны «զլորվել», էրգյա туро «շուրջ», մարի түргаш «դլորվել»:
5. թակ — մար. тукнаш, «դիպչել», тугаш «կոտրել», մոկչա токнамс «խփել/սիրտը», էրգյա тукномс «թակել, խփել», тукнома «խփոց, զարկ»:
6. փչակ — ֆին. pesä, тув. pezä կոմի поз, էրգյա пизе, մոկչա пиза, մարի пыжаш «թռչնի բույն»:

7. հալոել/հալվել — հունգ. oldani «հալել, լուծել», olvadni «հալվել», ֆին. hálveillä «ցրվել, ամփետանալ», կոմի улявны «հալվել»:
8. ծով — հունգ. to «լիճ», tavi «լճի, լճային», կոմի ты «լիճ», ուղմ. ты «ծով», մար. tave «ջրհոր», էրզյա тавада «ջրհոր», կոմի йӧжны «սառչել»:
9. ոյծ — հունգ. fazni «սառչել», մար. йукшаш «սառչել», йушто «սառնա-մանիք», մոկշա закс «հով», эшендемс «սառչել», կոմի йӧжны «սառչել»:
10. քսան — հունգ. húsz (քարդություններում huszon), կոմի, ուղմ. кызь «քսան»:
11. վեր/վերև — կոմի выв «մակերևույթ», выло «վրա», ուղմ. выр «քար-ծուկ», вылз «դեպի վեր», вылм «քարծր», вылын «վերևում», մար. вылан «վրա», հունգ. föle «վրա»:
12. ման — հունգ. menni, ֆին. mennä, կոմի мунны, ուղմ. мыныны, մորդ. менемс «գնալ»:
13. ուշ-հիշ — հունգ. esz, մար. уш «խելք, միտք, հիշողություն», մար. ашхаш «հիշել»:
14. եղեսմ — հունգ. haram «եղյամ», ֆին. halı «ցրտահարություն», kylmä «սառը», lumi «ձյուն», էստ. lume «ձյուն», կոմի лым «ձյուն», ёлык «սառած», ուղմ. лымы «ձյուն», մար. лым, лум «ձյուն», рун «եղյամ», кылмз «սառած», էրզյա кельме «սառը», лов «ձյուն»:
15. քանի — հունգ. hany, կոմի, ուղմ. көня «քանի»:
16. փեղկ — ուղմ. пулем «ճեղքված», մոկշա пяле «կես», մար. пелак, пеле «կես»:
17. կես — հունգ. kes «թուր», köze «միջև», ֆին. keskin «միջին, կենտրոնական», keskus «կենտրոն», ուղմ. кесяны «պատռել», кесэр «կտոր, պատահ»:
18. կեզ — ֆին. kesa «ամառ», էրզյա киз, մոկշа киза «ամառ, տարի», ուղմ. кезет «ջերմ, տենդ», մար. кече «ամառ»:
19. հիւս — ֆին. hius «մազ», հունգ. ossz «ընդհանուր», összes «ամբողջ», մար. ушаш «միացնել», ушнаш «միանալ, միավորվել», ушык «կապ, հանգույց»:
20. քայլ — հունգ. gyalog ֆին. askel «քայլ», էրզյա эскелькс «քայլ» эскелямс «քայլել», մոկշа кялемс «գնալ, անցնել» մար. ошкыл «քայլ»:
21. նայել — հունգար. nézni «նայել», nézet «հայացք», ֆին. nähdä «տեսնել», näkja «երևալ», էստոն. nägema «տեսնել», nägema «երևալ», էրզյա неемс «տեսնել», մոկշа няемс, няевомс «տեսնել», ուղմորտ. наяны «համը տեսնել»:
22. գերան—կոմի кер, ուղմ. кор, էրզյա керь ֆին. hirsu/himpen «գերան»:  
Հայերեն եղ-լիկնել արմատի զուգարանությունները ֆիննաուգրական լե-  
զուներում առավել քան խոսում են  
հայ. եղ-լիկնել — հունգ. lenni «լիկնել», elni «ապրել», ֆին. olla «լիկնել», elää «ապրել», էստ. olema «լիկնել», elama «ապրել», elu «կյանք», էրզյա, մոկշа улемс «լիկնել», կոմի овны, овлыны «ապրել, լիկնել», олом «կյանք», ուղմ. луыны «լիկնել, դառնալ», улыны «ապրել», улон «կյանք», մար. илаш, улаш «ապրել», лияш «լիկնել»:

Կարծում ենք՝ հ.-ե. նախալեզվի ավանդաբար ընդունված վերականգնումներն ինչ-որ չափով վերանայման կարիք ունեն։ Օրինակ, ընդունված է, որ հայերեն *արեգակ*, *երակ*, *առատ բառերում ա*, ե հնչյունները հավելում են, սակայն հունգարերենում գտնում ենք *ar* «հոսք», *er* «երակ», ֆիններենում *auru* «առու», *aurinko* «արեգակ» բառերը։ Մինչդեռ հայերեն *առու* բառի հնիս. ընդունված ծնն է *aru*։ Հայերեն *հոգի* բառի նախածնն է համարվում հնիս. *rouio-* արմատը, մինչդեռ ֆիններենում գտնում ենք *henki* «հոգի» և *henkilo* «անձ, մարդ»։ Նույն կերպ՝ ֆին. *kirja* «գիրք» (հնիս. *wer-*)։

Այլ օրինակներ՝

ֆին. *hinta*, *եստ*. *hind-* *հայ*. *զին* (*հ.-ե.* \* *ves-no*), ֆին. *ilma* «օդ, եղանակ» — *հայ*. *հողմն* (*հ.-ե.* \* *onema*), ֆին. *nuori* «երիտասարդ», *եստ*. *noor* — *հայ*. *նոր* (*հ.-ե.* \* *nevo-*), ֆին. *herata*, *եստ*. *arata* «արթնանալ» — *հայ*. *արթուն* (*հ.-ե.* \* *ruhi-*), ֆին. *henki* «հոգի», *եստ*. *hingus* «շունչ» — *հայ*. *հոգի* (*հ.-ե.* \* *rouio-*), *հունգ.* *hüvos* «հով» — *հայ*. *հով* (*հ.-ե.* \* *rou*—«փչել»); *հունգ.* *húsz* «քսան», *կոմի*, *ուլմ.* *коня* «քսան» — (*հ.-ե.* \* *wik'nti*), *հունգ.* *gyar* «գործարան», *gyartani* «արտադրել» — *հայ*. *գործ* (*հ.-ե.* \* *vorg-*), ֆին. *aste* «աստիճան» — *հայ*. *աստիճան* (*հ.-ե.* \* *steigh-*) և այլն։

Ֆիննաուգրական լեզուներում կան բառեր, որոնց զուգահեռները կարելի է գտնել հ.-ե. լեզուներում, սակայն դրանք առավել նման են բառի հայերեն տարբերակին. *հունգարերեն* *tor* «թուր», *olvadni* «հալվել», *erdo* «ամառ» (=արտ), *buta* «բութ, հիմար», *tüske* «փուշ» (= տատասկ), *hany* «քանի», *tíz* «տաս» (*tizen-*), *szabni* «ծնել», *maro* «կծու» (մոռ), *husz* (*huszon-*) «քսան», *er* «երակ», — *hegy* «այգի»։

Ֆիններեն՝ *tono* «հյուղակ, խրճիթ» (= տուն), *paitsi* «բացի», *vaki* «ժողովուրդ, մարդիկ» (= հոգի), *synty*, *syntyntä* «ծնունդ» (ծին/ծնունդ)։

Եստոներեն՝ *nagema* «տեսնել» (նայեն), *kaasa* «քարշ տալ», *juus* «մազ» (= հիւս), *peza* «թռչնի բույն», (= փչակ), *mure* «վիշտ» (= մրմուռ), *puit*, *puud* «փայտ», *vinguma* «վնգստալ», *king* «կիրք»։

Կոմի *буч* «փռչի», *ветлыны* «բայլել, զնալ», (= ոտն), *вёсна* «համուն, մասին, պատճառով, հետևանքով» (= վասն), *кер* «գերան», *кызь* «քսան», *кырым* «ստորագործություն» (= գրեն), *маті*; *матын* «մոտ» (= մօտ/մատ)։

Ուլմուրտերեն՝ *дырья* «դեռ», *кен* «հարս» (= կին), *куч* «խաչ», *кысыны* «մերսել» (= քսել), *матэ* «մոտ» (= մօտ/մատ), *ыбыны* «կրակել» (= խփել), *тыс* «տեսք, կերպարանք»։

Երզլա՝ *тапазь* «ջարդած, փշրած» (= թափած), *тороземс* «ռուչել» (= տոգել), *тукномс* «թակել» (= թակեն), *улезе!* «թող լինի, կեցցե» (= եղիցի)։

Մարիերեն՝ *карча—марча* «մանրուք, մանր ապրանք» (= կարճ—մարճ), *ирвел* «արևելք», *чыреан* «շառագույն, կարմրագույն» (= ծիրանի), *мер* «հանրային» (= մեր)։

Ձարմանալին այն է, որ ֆիննաուգրական լեզուներում գտնվում են հայերենի բարբառներին մոտ բառեր, որոնցից շատերը գրական հայերենին ծանոթ չեն։

Երզլա՝ *пеляза* «կատաղած», մոկչա՝ *пеляз* «գժված» — դրք. *պել*, *պելացած* «գիծ, գժված»։

Սար. лавра / лавра, կոմի՝ лел, մոկշա՝ лебонь, ֆին. тара «կեղտ» – դրբ. *լեպ* (< *աղբ*):

Հունգ. *ver*, ֆին. *vere-*, մորդ. *вер*, կոմի, ուղմուրտ. *вир*, մար. *вѣр* «արյուն» – Սրամո *վիրայն*, Զարուսին՝ *վիրեն* «արյուն»:

Կոմի *мыш* (мышак-) «մեջք, թիկունք» – դրբ. *մաշկ* «մեջք»:

Մոկշա *йылдъ, йылым* «վրա, վրան» – դրբ. *յրա*:

Մոկշա *дзенодны* բրբ. «բարձր հնչել», *дзенодчыны* «հնչել» – հայ. բրբ. *ձեն*:

Սարիերեն *эрташ* «անցնել, գնալ» – հայ. բրբ. *էրթալ*:

Ֆիննաուգրական լեզուներում փաստված են բազմաթիվ հնդեվրոպական, մասնավորապես իրանական փոխառություններ, որոնց մասին գրել են Դ. Կազանցեր, Պ. Գայդուն, Վ. Աբանը և ուրիշներ: Այդ փոխառություններին անդրադարձել են նաև Թ. Գամկրելիձեն և Ի. Իվանովը իրենց համրահայտ աշխատության մեջ<sup>16</sup>: Ցավոք, ֆիննաուգրական արմատների հ.–ե. զուգաբանությունները քննարկելիս նրանք երբեմն չըջանցել են հայերենի օրինակները, մինչդեռ փոխառությունների մեջ կան բառեր, որոնք ավելի մոտ են հայերենին. օրինակ՝ ուղմուրտերեն *erdzi* «արծիվ», հունգարերեն *évez*, բարդություններում՝ *írtzen-*, ճիշտ ինչպես հայերեն *տաս/տասն*–: Մինչդեռ Թ. Գամկրելիձեն և Ի. Իվանովը բերում են միայն արմատի ծայնեղ տարբերակները՝ կոմի և ուղմուրտերեն *das*: Ճիշտ նույն կերպ ֆիններեն *saivas* և էստոներեն *saevas* «երկինք» բառերը նրանք համեմատել են իհն հնդկերեն *deva* «աստվածություն», ավեստ. *daēva* «ղև», լիտվերեն *dievas* «աստված» բառերի հետ, մոռանալով հայերեն *տիւ*–ը: Բայց չէ՞ որ *ժ*– լծողության մեջ հենց իրենք առաջնայինը համարել են *ժ*–ը: Գայերեն *տիւ* արմատի ստուգաբանությանն է անդրադարձել նաև Վ. Համբարձումյանը<sup>17</sup>: Ֆիններեն *varsa* և էստոներեն *vars* արմատները համեմատվել են միայն հնդիրանական ճյուղի զուգաբանությունների հետ՝ *h*. հնդկ. *vṛṣā* «արու» և այլն: Այս արմատի հայերեն համարժեքն է *ործ*–ը: Այս փաստերը խոսում են այդ մասին. որ հայերենի և ֆիննաուգրական լեզուների համեմատական վերլուծությունն անհրաժեշտություն է: Մեր դիտարկումները նախնական բնույթի են, և հետագա ուսումնասիրությունը կարող է ցույց տալ, որ ընդհանրությունները պատահական բնույթ չեն կրում: Արդեն հավաքված է որոշակի բառային և բերականական նյութ, որը, սակայն, անհնար է ամփոփել մեկ հոդվածի շրջանակներում:

Վերոհիշյալից կարելի է անել մի շարք նախնական հետևություններ.

ա) Ֆիննաուգրական ժողովուրդների նախնիները ինչ–որ ժամանակ լեզվական լուրջ առնչություններ են ունեցել Գայկական լեռնաշխարհի բնակիչների հետ:

բ) Այդ առնչությունները պատահական բնույթ չեն կրել, քանի որ նրանք արտացոլում են հայերենի պատմական զարգացման ժամանակագրական տարբեր փուլերը:

<sup>16</sup> Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры. т. 2, Тбилиси, 1984 с. 920–942.

<sup>17</sup> Տես Վ. Հ. Համբարձումյան, Գայերեն *աստված* բառի ծագումն ու տիաաբանությունը, Երևան, 2002:

գ) Չի կարելի բացառել, որ ֆիննաուգրական ժողովուրդները կրում են Հայկական լեռնաշխարհում անհիշելի ժամանակներից բնակված և ժամանակի ընթացքում անհետացած ցեղերի անունները: Այդ ցեղերից մի քանիսն, ըստ երևույթին, գաղթել են Հայկական լեռնաշխարհից իրենց հետ տանելով սեփական ցեղային անվանումները, լեզուն և մշակույթը: Հետագա հանգամանալից ըննությունը հնարավոր է, որ որոշակի պատասխան տա վերոհիշյալ հարցադրումներին:

Г. Никогосян

## АРМЯНСКИЙ И ФИННОУГОРСКИЕ ЯЗЫКИ

Вышеизложенный материал дает основание сделать следующие выводы:

1. Предки финноугорских народов в далёком прошлом имели серьезные языковые контакты с жителями Армянского нагорья.

2. Эти контакты не носили случайный характер, ибо они отражают разные хронологические стадии исторического развития армянского языка.

3. Не исключается, что финноугорские народы носят имена племен, с незапамятных времен проживавших на Армянском нагорье и со временем ассимилированных. Некоторые из них эмигрировали, унося с собой племенные названия, язык и культуру. Дальнейшее доскональное исследование, возможно, даст ответ на предлагаемую нами проблему.

G. Nikoghossyan

## ARMENIAN AND FINNO-UGRIC LANGUAGES

This article is dedicated to the possible contacts between Armenian and Finno-Ugric languages. The following conclusions may be done from the above-given analysis:

1. The ancestors of Finno-Ugric peoples in the remote past may have had serious linguistic contacts with the natives of the Armenian Highland.

2. These contacts couldn't have been incidental, as they reflect different chronological stages of historical development of the Armenian language.

3. It's not quite impossible that Finno-Ugric peoples bear the names of tribes having lived in the Armenian Highland from times immemorial and disappeared in the course of time. Some of these tribes could have emigrated from the Highland, taking with them tribal names, language and culture. Further detailed investigation is likely to give an answer to the problem suggested.